Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2025 թ. հունիսի 23-ի թիվ 79-Ա որոշման

ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱ

Գորիս համայնքի սանիտարական մաքրման սխեման պարունակում է հետևյալ հիմնական տարրերը. համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը:

Գորիս համայնքում սանիտարական մաքրումը ներառում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, պուրակների, հրապարակների, հուշարձանների, բակերի, մայթերի, անցումների, կամուրջների, սիզամարգերի, և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումն աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից, փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների, անցումների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը:

Սանիտարական մաքրման աշխատանքները, կապված տարվա եղանակների հետ, իրենց բնույթով տարբեր են: Այն սահմանափակվում է ամառային և ձմեռային մաքրմամբ:

Ամառային մաքրում. Այն իր մեջ ընդգրկում է մաքրման ձեռքի աշխատանքի և մեքենայացված մաքրման տեխնոլոգիաները:

Հավաքարարների միջոցով իրականացվող մաքրման ձեռքի աշխատանքի հիմնական նպատակն է սահմանված նորմերին համապատասխան ապահովելու ընդհանուր օգտագործման տարածքների՝ աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից մաքրումը և փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը՝ միկրոկլիման բարելավելու և օդի աղտոտվածության աստիճանը նվազեցնելու նպատակով:

Հավաքարարները մաքրվող տարածքներից աղբը հավաքում են փողոցներում տեղադրված աղբարկղերում, կամ այդ նպատակի համար հատկացված տեղերում՝ կույտերով:

Սիզամարգերից մաքրումը կատարվում է ձեռքով մաքրման միջոցով:

Մեքենայացված մաքրման դեպքում հավաքարարը մաքրում է փողոցների և հրապարակների մի մասը՝ 1 մետր լայնությամբ գոտիով:

Մեքենայացված մաքրման խնդիրն է ապահովել փողոցներից աղբի հեռացումը, փոսերի մաքրումը և փողոցների երթևեկելի մասի լվացումը (ջրումը) հատուկ մեքենայի միջոցով:

Ձմեռային մաքրում. Այն իր մեջ ընդգրկում է, փողոցների, մայթերի, հրապարակների ըստ անհրաժեշտության մաքրումը ձյունից, պայքարը՝ մայթերի սառցակալման դեմ, սառցակույտերի մաքրումը և հեռացումը: Բացի ձյունից, ձմեռային մաքրման դեպքում ապահովվում է փողոցների, մայթերի ու հրապարակների մաքրումը (աղբի մաքրումը և հավաքումը) ձնատեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Սանիտարական մաքրման սխեման հաստատում է համայնքի ավագանին:

ՀԱՇՎԱՐԿ

Գորիս համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքների և առաջացող աղբի ծավալների

Գորիս քաղաքի ընդհանուր 443746 քառ.մետր ասֆալտապատ փողոցների, մայթերի և հրապարակների տարածքից մաքրման տակ ընդգրկված է 443746 քառակուսի մետրը, որից ձեռքով մաքրմանը 195110 քառ. մետր, այդ թվում՝

ա/ երթևեկելի մաս (փողոց, մայթ հրապարակ) 184410 քառ. մետր

բ/ սիզամարգ՝ 10700 քառ. մետր

Սանիտարական մաքրումը իրականացվում է ամենօրյա աշխատանքային ռեժիմով՝ շաբաթը 6 օր: Սանիտարական մաքրման ենթակա տարածքների սանիտարական մաքրումը իրականացվում է համաձայն հավելված N 1.2-ով ներկայացված ժամանակացույցի, իսկ աղբահանությունը՝ համաձայն հավելված N 1.1-ով ներկայացված ժամանակացույցի:

Ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի ծավալները կազմում են՝

ա/ կատարելագործված ծածկույթ ունեցող մայթերի, փողոցների ու հրապարակների մեկ քառ. մետր մակերեսից տարեկան գոյանում է 25կգ ավլվածք,

բ/ սիզամարգերի 1քառ. մետր մակերեսից տարեկան գոյանում է 10կգ:

Գորիս քաղաքի մաքրվող մակերեսից տարեկան կգոյանա՝

ա/ 443746 x 0.025տ = 11093.65 տոննա աղբ,

գ/ 10700 x 0.01տ = 107 տոննա աղբ,

Ընդամենը՝ 11200.65 տոննա աղբ:

Օրական ավլվածքը կկազմի մոտավորապես 31 տոննա աղբ:

Աղբի հավաքմանը և պահմանը ներկայացվող պահանջները.

Կենցաղային աղբը հավաքվում և (կամ) պահվում է քաղաքային համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և համայնքի կամ օպերատորի տրամադրած տարողություններում՝ աղբամաններում կամ կոնտեյներներում, աղբախցերում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

Ոչ կենցաղային աղբը, ինչպես նաև խոշոր եզրաչափերով աղբը հավաքվում և պահվում է աղբահանության վճար վճարողների ձեռք բերած կամ համայնքի, կամ օպերատորի, կամ սույն կարգով նախատեսված անձանց տրամադրած և դրանց համար նախատեսված աղբամաններում կամ կոնտեյներներում, որոնք տեղադրվում են աղբահանության վճար վճարողների համապատասխան տարածքներում:

Համայնքի կենտրոնական տարածքների՝ փողոցների, այգիների, պուրակների, հրապարակների, մայթերի, կամուրջների, սիզամարգերի և ընդհանուր օգտագործման այլ տարածքների աղբահանությունը /նաև մաքրումը/ իրականացվում է սահմանված գրաֆիկով՝ համաձայն Հավելված N 1.1-ի և N 1.2-ի :

Աղբի հավաքման աշխատանքներն իրականացվում են տարբեր գործիքների (ավել, ցախավել, գոգաթիակ, աղբի պարկ և այլն), տեխնիկական հարմարանքների (աղբամուղ, վանդակ՝ պլաստիկ թափոնի համար) և տեխնիկական միջոցների (ջրցան մեքենայի,) միջոցով:

Աղբի փոխադրմանը ներկայացվող պահանջները.

Աղբի փոխադրումը իրականացվում է՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը:

Աղբը փոխադրվում է մինչև կոնտեյներների ամբողջությամբ լցվելը:

Աղբն աղբատար մեքենաների միջոցով տեղափոխվում է մոտ 3 կմ հեռավորության վրա գտնվող տիպային աղբավայր:

Աղբի տեղադրմանը ներկայացվող պահանջները.

Աղբը տեղադրվում է Գորիս համայնքի աղբավայրում:

Աղբավայրերում աղբի տեղադրումն իրականացվում է աղբավայրերի շահագործման և սանիտարահիգիենիկ կանոնների պահանջների պահպանմամբ:

Արգելվում է աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում:

Աղբի տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները.

Աղբի տեսակավորման արդյունքում պլաստիկե թափոնները վերամշակվան նպատակով ուղարկվում է քաղաք Աբովյան, իսկ մնացած աղբի վնասազերծումը կատարվում է հողածածկմամբ:

Գորիս համայնքում սանիտարական մաքրման համար անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները

Գորիս համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի տեղափոխումը կատարվում է միայն աղբահանության

համար օգտագործվող բեռնատար մեքենաների միջոցով՝ ձեռքով, իսկ աղբամաններից՝ մեքենայացված բարձման միջոցով:

Փողոցների լվացումը կատարվում է ջրող-լվացող մեքենայի միջոցով:

Փողոցներից ձյան մաքրման աշխատանքները կատարվում են համապատասխան մասնագիտացված մեքենայի կամ դրան փոխարինող մեխանիզմների միջոցով:

Գորիս համայնքում սանիտարական մաքրման ենթակա հուշարձաններն են՝

Հուշաղբյուր 2-րդ աշխարամարտում զոհվածների-Գուսան Աշոտի քաղաքային զբոսայգու տարածքում

Հուշարձան Ակսել Բակունցի – Գր. Նժդեհի փողոց

Հուշարձան Գուսան Աշոտի – Մաշտոցի 5

Հուշարձան 2-րդ աշխարամարտում զոհվածների – Գր. Տաթևացուի.

Հուշարձան Ս. Խանզադյանի- Գետափնյա 1

Հուշարձան Խորհրդային իշխանության հաստատման զոհվածներին– Անկախության 64

Հուշարձան Գ. Նժդեհի- Արզումանյան փողոց

Ակսել Բակունցի տուն թանգարան- Մ. Մաշտոցի 41

Հուշարձան Հին Զանգեր- Երևանյան խճ.

Հուշարձան Գորիսի Զանգեր- Արցախյան խճ.

Հուշարձան Գր. Տաթևացու- Անկախության 3

Հուշարձան Եկրաշարժի զոհերի նվիրված-Վ. Մամիկոնյան

Հայրենական մեծ պատերազմի հուշարձան-Ավանգարդ փողոց

Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիր-Ավանգարդ փողոց

Զանգեզուրի բարի ծնունդ Գուսան Աշոտի գերեզման-Թոսկապ

Բնակելի քարաբուրգերի համալիր

Սուրբ Հռիփսիմե եկեղեցի – Գորիս գյուղ

Խաչքար Արմենի սար-Խաչերի ձոր թաղի

ՍԲ. Գր. Լուսավորիչ եկեղեցի –Մաշտոցի փ.

Գյուղական բնակավայրերի հուշարձանների, եկեղեցիների և վանքերի տարածքներ:

Հավելված N 1.1
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու
2025 թ. հունիսի 23-ի թիվ 79-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ (ՓՈՂՈՑՆԵՐԻ) ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ

Հ/Հ	Մաքրման ենթակա տարածքներ	Աղբահեռացման հաճախականությունը
1.	Սյունիքի փողոց (35750 քմ)	ամենօրյա
2.	Անկախության փողոց (21580 քմ)	ամենօրյա
3.	Մ. Մաշտոցի Փողոց (22725 քմ)	ամենօրյա
4.	Վ. Մամիկոնյան փողոց (24480 քմ)	Շաբաթը 2 անգամ
5.	Մ. Խորենացի փողոց (18800 քմ)	ամենօրյա
6.	Ակսել Բակունցի փողոց (11000 քմ)	Շաբաթը 2 անգամ
7.	Սաթյան փողոց (9282 քմ)	Շաբաթը 2 անգամ
8.	Գալստյան փողոց (10010 քմ)	Շաբաթը 2 անգամ
9.	Թումանյան փողոց (5134 քմ)	Շաբաթը 2 անգամ
10.	Յոլյան փողոց (16800 քմ)	Շաբաթը 2 անգամ
11.	Արտաշեսյանների փողոց (7390 քմ)	Շաբաթը 2 անգամ
12.	Քրիստափորի փողոց (8080 քմ)	Շաբաթը 2 անգամ
13.	Ավանգարդ փողոց (17280 քմ)	Շաբաթը 2 անգամ
14.	Սևյան փողոց (5100քմ)	Շաբաթը 2 անգամ
15.	Արզումանյանների փողոց (5460 քմ)	Շաբաթը 2 անգամ
16.	Սարգսյան փողոց (7490 քմ)	Շաբաթը 2 անգամ
17.	Սարյան փողոց (8400 քմ)	Շաբաթը 2 անգամ
18.	Առաքելյան փողոց (6790 քմ)	Շաբաթը 2 անգամ
19.	Նոր կյանք փողոց (4030 քմ)	Շաբաթը 1 անգամ
20.	Օրբելյանների փողոց (10667 քմ)	ամենօրյա
21.	Մակիչի փողոց (2485 քմ)	ամենօրյա

22.	Կոմիտասի փողոց (11160 քմ)	ամենօրյա
23.	Գ. Աշոտ փողոց (10730 քմ)	ամենօրյա
24.	Զ. Անդրանիկի փողոց (7470 քմ)	ամենօրյա
25.	Գ. Նժդեհի փողոց (14388 քմ)	ամենօրյա
26.	Արևշատ փողոց (2542 քմ)	Շաբաթը 2 անգամ
27.	Այգեստան փողոց (5040 քմ)	ամենօրյա
28.	Արեգունի թաղամաս (6540 քմ)	Շաբաթը 2 անգամ
29.	Դավիթ Բեկի փողոց (5150 քմ)	ամենօրյա
30.	Յուրի Բախշյան փողոց(7160 քմ)	ամենօրյա
31.	Տիգրան Մեծի փողոց(6118 քմ)	Շաբաթը 1 անգամ
32.	Արցախյան ԽՃ(11240 քմ)	ամենօրյա
33.	Արշակունիների փողոց(5850 քմ)	Շաբաթը 1 անգամ
34.	Գր. Տաթևացի փողոց(8925 քմ)	ամենօրյա
35.	Համո Սահյան փողոց(2637 քմ)	ամենօրյա
36.	Նարեկացի փողոց(9460 քմ)	ամենօրյա
37.	Թանգուն ձոր(4300 քմ)	Շաբաթը 2 անգամ
38.	Կոմերիտմիության փողոց(4690 քմ)	Շաբաթը 3-4 անգամ
39.	Երևանյան ԽՃ(26980 քմ)	ամենօրյա
40.	Գետափնյա թաղամ(5430 քմ)	ամենօրյա
41.	Գորիս գյուղ(10887 քմ)	ամենօրյա
42.	Ավանգարդ 6-րդ թաղ. (1544 քմ)	ամենօրյա
43.	Ավանգարդ 5-րդ թաղ. (4712 քմ)	Շաբաթը 2 անգամ
44.	Սալ-Քար(3690 քմ)	Շաբաթը 4 անգամ
45.	Վանքի տափ թաղամաս(8370 քմ)	ամենօրյա

Գյուղերը՝ Վերիշեն, Ակներ, Քարահունջ, Որոտան, Հարթաշեն, Խնձորեսկ, Ներ. Խնձորեսկ:

Աղբի հավաքման աշխատանքները իրականացվում են <<Գորիս համայնքի կոմունալ ծառայություն>> Համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից, ներքոհիշյալ

ՄԱՋ մակնիշի կողային բարձման 3 բեռնատար,

ԳԱՋ մակնիշի կողային բարձման բեռնատար,

ԿԱՄԱԶ մակնիշի հետևի բարձման բեռնատար,

ՄԱՋ մակնիշի հետևի բարձման 2 բեռնատար,

ԶԻԼ մակնիշի ինքնաթափ 5 բեռնատար մեքենաների միջոցով:

Հավելված N 1.2
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս
համայնքի ավագանու
2025 թ. հունիսի 23-ի թիվ 79-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ

Հ/Հ	Մաքրման ենթակա տարածքներ	Աշխատանքների կատարման հաճախականություն		Աշխատանքների սկիզբը		Ծանոթություն
		Ամառ	Ձմեռ	Ամառ		
1.	Կենտրոնական փողոցներ, մայթեր, հրապարակներ	Ամեն օր	Ամեն ձյուն տեղալուց հետո և հարակից օրերին	08^{00}		Ամռանը՝ ավլում և ավելվածքի բարձում – տեղափոխում Ձմռանը՝ ձյունամաքրում Փոցխում, էտում, հավաքում, բարձում և տեղափոխում
2.	Այգիներ, պուրակներ, աստիճանավանդակներ					
3.	Ներթաղամասային ճանապարհներ, բակեր, մանկական խաղահրապարակներ	Ամեն օր	Ամեն ձյուն տեղալուց հետո և հարակից օրերին	08^{00}		
4.	Հիմնարկ – ձեռնարկություններ տանող ճանապարհներ	Ամեն օր	Ամեն ձյուն տեղալուց հետո և հարակից օրերին	08^{00}		
5.	Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	Ամեն օր	-	08^{00}		
6.	Հուշահամալիրներ, հուշարձաններ, վանական համալիրի և եկեղեցու տարածքներ	-	Ամեն ձյուն տեղալուց հետո և հարակից օրերին	08^{00}		

7	Վերիշեն	Շաբաթը 3 անգամ				
8	Ակներ	Շաբաթը 3 անգամ				
9	Քարահունջ	Շաբաթը 2 անգամ				
10	Որոտան	Շաբաթը 2 անգամ				
11	Հարթաշեն	Շաբաթը 2 անգամ				
12	Խնձորեսկ	Շաբաթը 4անգամ				
13	Ն. Խնձորեսկ	Շաբաթը 3 անգամ				